

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 50/3
5 սեպտեմբերի 2017թ.

Քննարկվեց Ա/Ձ Արման Դավթյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 17.05.2017թ. N 2135884 ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկման դեմ:

Ա/Ձ Արման Դավթյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ-ի կողմից Ա/Ձ Արման Դավթյանի մոտ ս/թ մայիս ամսին իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 17.05.2017թ. կազմված N 2135884 ստուգման ակտով վճարման է առաջադրվել 150000 դրամի տուգանք:

Ֆինանսական լուրջ խնդիրների պատճառով ակտի գումարը Ա/Ձ Արման Դավթյանը կարողացել է մուծել ժամկետից 1 օր ուշ՝ 19.07.2017թ., ինչի արդյունքում ակտի գումարը կրկնապատկվել է:

Հաշվի առնելով, որ լրացուցիչ 150.000 դրամը շատ մեծ հարկային բեռ է, Ա/Ձ Արման Դավթյանը խնդրում է չեղյալ համարել ակտի կրկնապատկված մասը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնա-
ժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ ակտի 04.05.2017թ. N 2135884 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արման Դավթյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 17.05.2017թ. N 2135884 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով ՀՀ կառավարության 26.03.2015թ. N 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները խախտելու համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 150.000 դրամ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

Նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Տվյալ դեպքում, Ակտի օրինակը Ա/Ձ Արման Դավթյանի կողմից ստորագրությամբ ստացվել է 17.05.2017թ., ինչի վերաբերյալ Ակտում կատարվել է համապա-

տասխան գրառում: Այսինքն, Ակտը սահմանված կարգով ուժի մեջ է մտել 18.05.2017թ.:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է՝

ա) վեց հարյուր հազար դրամի չափով՝ հանրային սննդի օբյեկտում իրականացվող հանրային սննդի գործունեության մասով, եթե այդ գործունեությունը «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն, չի համարվում արտոնագրային վճարի օբյեկտ.

բ) հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ գործունեության այլ տեսակների մասով:

Նշված հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված տուգանքը, ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում, կրկնապարկվում է:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին:

Վերը նշված իրավանորմերի դրույթները համադրելով սույն գործին առնչվող փաստական հանգամանքների հետ, Հանձնաժողովը գտնում է, որ Ակտով առաջադրված տուգանքը չկրկնապատկվելու համար Ա/2 Արման Դավթյանի կողմից այն պետք է մուծվեր մինչև 18.07.2017թ. ներառյալ: Սակայն քննարկվող դեպքում Ա/2 Արման Դավթյանի կողմից տուգանքի գումարը մուծվել է 19.07.2017թ., որի հետևանքով այն սահմանված կարգով կրկնապատկվել է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ա/2 Արման Դավթյանի գանգատը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Սևանի ՏՀՏ 17.05.2017թ. N2135884 ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկման դեմ, մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

